

ԵՂԵՔՆԵՐ



Վերջերս Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմում անահացած ԱԼԵՔՍԱՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՎԻՐՎԱԾ «ԻՍ ԿՅԱՆՔԸ ԻՄ ՊԱՏԵՐԱԶՄՆ Ե» ֆիլմ-էսսեի պրեմիերան և նույն խորագիրը կրող գրքի շնորհանդեսը:

Գրքի նախախոսքում հերոսի մայրը՝ Գոհար Սիմոնյանը, գրում է. «Ցավից սկսեցի գրել, գրուցել տղայիս հետ: Հետո զգացի, որ ուզում եմ Ալեքսի՝ որպես սովորական և միևնույն ժամանակ արտասովոր մի գյումրեցի տղայի մասին շատերն իմանան: Գրում եմ առանց չափազանցության և ուռճացրած հայրենասիրության, այս սերնդի գերակշռող տղաներին բնորոշ ընկերական ջերմ հարաբերությունների և ուսանողական անհոգ կյանքի մասին, որն ընդհատվեց դաժան պատերազմով»:

Սրտի խոսք ասացին ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, որը «Իմ կյանքը իմ պատերազմն է» ֆիլմի սցենարի հեղինակն է, ապա ֆիլմի ռեժիսորը՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի կինոարվեստի ամբիոնի վարիչ Գառնիկ Սարգսյանը, Գյումրու թիվ 45 դպրոցի տնօրեն Աստղիկ Վարդանյանը, Երևանի պետական համալսարանի դասախոս Լյուբա Միրզոյանը, Ալեքի մարտական ընկեր Գոռ Շիրինյանը, գրքի խմբագիր, բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը, բանաստեղծ Ռոբերտ Եսայանը, ապա և սրտառու խոսք ասաց հեղինակը Գոհար Սիմոնյանը:

Գեղարվեստական կատարումներով Ելույթ ունեցան միջազգային մրցույթների դափնեկիրներ, Կոնսերվատորիայի ուսանողներ Միքայել Պետրոսյանը, Խորեն Հովհաննիսյանը:

Առանձնահատուկ տպավորություն թողեցին հերոսի սիրելի երգչի՝ Արամ ՄՅՅ-ի կատարումները:

Արվեստի ու գրականության մեջ մեր խնդիրը հայի տեսակի հարատևման գաղտնիքի բացահայտումն է՝ շարունակ փոփոխվող քարտեզի վրա մեր մնալուն տեղն ունենալու ձգտումով:

Վերջին ժամանակներս նոր լույս ընծայվող գրքերի մեջ ըստ էության ավելացել է սահմանափակ վիճակների պատերազմական թեմայով գրականությունը: Պատերազմը դեռ չի ավարտվել... այն տակավին շարունակվում է մեր հոգիներում ու մտաշխարհում՝ պատվելով որպես արկի բեկոր և բեկորի թողած անամոք վերք...

Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս Ալեքսան Ռազմիկ Սիմոնյանի մասին պատմող այս վկայագիր-մատյանը մերօրյա պատերազմի գեղարվեստական վավերագրություն է:

Սա գիրք է ոչ միայն Ալեքի, այլև նրա մարտական ընկերների, միջավայրի ու պատմական մեր ժամանակների մասին: Այս հիշատակարան-գրքի էջերում Ալեքը՝ որպես հայ գեների ոգեկիր, բարձրանում է կերպարակերտման բոլոր չափումներով՝ թե՛ էպիկական, թե՛ քնարական: Անգամ նրան բնավ չճանաչողը գիրքն ընթերցելուց հետո կզգա նրա լիարյուն, լիաբարբախ, մտերմիկ ու հարազատ, ես կատեի՝ շրիսկան ներկայությունը: Ինչ խոսք, էպիկական չափման մեջ առաջնային է հեղինակային չափումը, որովհետև այս կենսապատում-հերոսապատումը գրված է սիրող մոր կրակված սրտով ու զարգանում է նրա հույզերի պատարագով. «Տունս դու էիր, Կարոտ, որ Ալեք անունն ունի: Ալյո՛շս, իմ քնոր՛ւշ տղես: Ութ տարեկան էիր, ամռանը բորիկ ոտքդ դրել էիր նոր գողած երկաթյա խողովակին, և ոտքիդ տակը վառվել էր, լաց էիր լինում, ես էլ չգրել ու փչում էի վառածի վրա: Այնքան փչեցի, որ երբ տեղիցս վեր կացա, գլխապտույտ ունեցա ու վայր ընկա»:

...Ասացին՝ մեքենան այրվել է, ու երբ քեզ հանել են մեքենայից, ոտքերդ են այրված եղել... Համբուրում եմ մտովի ու փչո՛ւմ, փչո՛ւմ, փչո՛ւմ...»:

Ալեքի կամ, ինչպես մայրն է մտերմիկ ասում՝ Ալեքոյի կերպարը կենսապատում այս գրքում սովորական օրերի ռիթմից դուրս է գալիս և մեծ կյանքի թոհուրոհի մեջ դառնում հմայակերպար: Ընկերների համար ոգևորիչ են նրա կենսաթոթիք, ջղոտ խոսքը, կամային գոր-

ծողությունները, շարժումը, վճռականությունը: Թեև մայրական գորովը նրա մշակութային օրորոցն է, այնուհանդերձ նա անցել է այրական դպրոց, ինքնահաստատված տղայի հոգեկերտվածք ունի Ալեքը, վառ մտախառնվածք և ամեն բոլոր համուն ընտրյալ գաղափարի պատրաստ է ինքնագոհումի...

Գրքում Ալեքի էպիկական կերպարի կերտման մյուս չափումները ինքնաչափումն է և միջավայրի չափումը, որն երբեմն դրսևորվում է միաձուլյ: Մարտերի բոցերի մեջ իրենց ինքնությունը թրծած Ալեքն ու նրա ընկերները հավատում էին, որ իրենց անավարտ թռիչքի շարունակությունը վաղվա օրվա մեջ է, այն օրվա, որ դեռ պիտի գա...

Եվ նրանք մեծն Սարոյանի ասույթային մտքի համաձայն ամեն օր ապրում էին այնպես, ինչպես կապրեին իրենց կյանքի վերջին օրը:

Գրքում կանխագուշակման բացառիկ գործառույթ ունեն մոր Գոհար Սիմոնյանի երազտեսիլները, երբեմն դրանք փոխհատուցողական են: Եվ հարց է ծագում՝ որն է ավելի իրական ու ապրեցնող՝ երա՞զը, թե՞ իրականությունը... Կարծում եմ՝ հոգեվերլուծության հայեցակետից անչափ ուշագրավ են այս տեսիլ-երազները և բնորոշ մեր գենոֆոնդի գերզգայուն շերտին՝ մայրերին:

«Հոկտեմբերի 31-ին Ալեքի մայրը արթնացել էր վատ երազից. կատուն փաթաթվել էր ոտքին ու ոտքի վրա սատկել: Գոհարը հնարավոր բոլոր համարներով զանգում էր, որ մի քիչ հանգստացմի սրտի փոթորիկը:

Ձանգ եկավ, Արցախից է, տղես է. խլեց հեռախոսն ու ալլո-ից հետո արյունը սառավ երակներում»:

Ինտելեկտուալ ու կրակի կտոր հոգու տեր Ալեքի մասին են բոլոր ընկերների, ուսուցիչների ու դասախոսների պատմումները, որոնք յուրօրինակ սյուժեներ են մայր սյուժեի մեջ, ու ոչ մի հորինում. Ալեքը՝ զվարճախոս՝ Գյումրվա համով-հոտով խոսվածքով, Ալեքը՝ սիրահար՝ նուրբ ներաշխարհով, Ալեքը՝ ընկերների համար պատվելի քավոր, Ալեքը՝ իրեն տանավոր, Ալեքը՝ կինոյի տղա, Ալեքը՝ ժամանակի ափի մեջ անվերջ բարձրացող...

Ասում են՝ պատերազմի դաշտում դիպված է ողջ մնալը, դիպված է նաև՝ զոհվելը՝ գոյութ-

յան հակառակ երեսը... Իսկ դու, Ալեք՝ զինվորս, ասում էիր. **«...ես մեռնելուց չեմ վախենա, կվախենամ, օր մեռանք, ըսքան էրածներս ջուրը կլցվեն»:** Եվ հետո զինակից ընկերոջդ՝ Գոռին տված փոխադարձ ուխտերդումը՝

«Գոռ, թե ընձի բանըմ էղնի, ստեղ չթողնիս...

Գոռն էլ թե՛ դու էլ իմ մարմինը մերոնց կհասցնես:

Հերոսական տղերք, ձեր էրածը ջուրը լցվելու ցավը... հետամուտ է մեզ...

Քո բազկին դրոշմված **Իմ կյանքը իմ պատերազմն է՝** մեր հավաքական գոյի ընդլզման բանաձևն է, Ալեքս, տրամաբանորեն ընդհանրացնելով՝ մեր կյանքը մեր պատերազմն է: Մայրդ գրում է. **«Վիկինգների մասին ֆիլմեր դիտելուց հետո շատ էիր ոգևորված ու ինձ էիր բացատրում, որ վիկինգների էլիտար ռազմիկները երկրպագում էին պատերազմի ու մահվան աստծուն՝ Օդինին: Ասում էիր՝ վիկինգի համար շատ կարևոր է մեռնել հենց ռազմի դաշտում և անպայման զենքը ձեռքին, որ մասնակցի Օդինի խնջույքին՝ Վալխալայում (դրախտում):**

Ինչո՞ւ հենց սա ընտրեցիր, ինչո՞ւ: Չեմ ուզում հավատալ, մի՞թե ամեն ինչ կանխորոշված էր...»:

Այսօր հայրենիքը մեզնից պահանջում է վիկինգի պես մեռնել, պատերազմիկ, իսկ զինվոր լինելը, ինքդ էլ գիտես, հենց այնպես չի լինում:

Քնարական շեղումով մի էպիկական բան հաստատեմ՝ մեր թափած արյունը աշխարհում մեզ ոչ այնքան տեր դարձրեց, որքան պահանջատեր:

Այնուհանդերձ, Ալեք, Ալեքո՛, Ալեքսան Սիմոնյան, լինելու մի միջոց կա. լույսի մեջ լինել, իսկ դու և քո հայրենասպարտ ընկերներն ավելի քան լույսի մեջ եք:

Փառքի դափնիներ ձեզ, տղերք. ձեր անունը Լեգեոն է. խոնարհումս՝ ձեր կակաչասիրտ մարտերին, տուկուն ԳՈՀԱՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ձեզ սպասող անհարսնացյալ աղջիկներին, չամուսնացյալ, բայց իրենց այրի

համարող կարոտախն հայուհիներին, որ գիտեն՝ ինչ է նշանակում զավակի, եղբոր, ամուսնու, սիրած տղայի տունդարձ առանց տուն դառնալու:

Կարդացե՛ք ԻՍ ԿՅԱՆՔԸ ԻՄ ՊԱՏԵՐԱԶՄՆ Ե գիրքը. նրանից ՀԱՅՐԵՆԻՔԻ հոտ կուզա:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ալեքսան Սիմոնյանին ԳՎԻՐՎԱԾ ֆիլմը մի յուրօրինակ հուշարձան է՝ կանգնեցված պայծառ հայրորդու համար: Այդպիսի մի հուշարձան էլ «Իմ կյանքը իմ պատերազմն է» գիրքն է, որը պատմում է Ալեքսանի՝ այդ լուսավոր երիտասարդի, կարծ, բայց բովանդակալից, լիքը կյանքի մասին: Այս, ինչպես նաև իրենց տան դիմաց ևս մի հուշարձան Ալեքի համար կանգնեցրել են իր ծնողները, բայց լավագույն հուշարձանն Ալեքն ինքն է կերտել իր համար: Այն իր ապրած կյանքն է և թողած վառ հիշողությունը, որն այլևս փորագրված է երկնքի անմահության մատյաններում:

Այս գիրքը միտված է կյանքին և դեմ է մահվանը: Այս գիրքը դեմ է պատերազմներին: Սա գիրք-կյանք է: Այս կյանքը պետք է կարդալ: Այս գիրքը պետք է ապրել:

Այս գրքում անչափելի ցավի



կողքին ապրում է հսկայական հպարտությունը: Այն ուղղված է ոչ միայն Ալեքի, այլև մեր անմահացած բոլոր զինվորների ծնողներին: Եվ տալիս է նրանց ապրելու բանաձևը. նժարել հպարտությունը ցավի հետ և չթողնել նժարներից մեկը խոնարհվի մյուսի հաշվին: Ապրել ապրեցնելու և ապրելու համար... Այսպես ավելի հեշտ կլինի... Այսպես ավելի ճիշտ կլինի...

Այս գիրքը ուղղված է երիտասարդությանը. ո՞ր ճանապարհն է տանում լիարժեք կյանքի խառնարան: Եվ եթե անհրաժեշտ է, արժե՞ տատանվել կյանքը հայրենիքի զոհասեղանին դնելիս:

Այս գիրքը ուղղված է հայ ժողովրդին. դարերի փորձությունից, մահ այս պատերազմից հետո վերջապես տարբերակելու՞ ենք մեր բարեկամին ու թշնամուն, թե՞ դարձյալ խաբվելու ենք՝ խաբելով ինքներս մեզ, խաբելով կողքիններին:

Վերջապես այս գիրքը մի լուսավոր հայրորդու մասին է, որը այսպես թե այնպես չէր կարողանալու տեղավորվել մեր գորշ իրականության մեջ և շատապեց գնալ-միանալու հավերժի լուսին:

Բարձրացել Հայրենիքի տանիքը՝ Պահմտոցի էինք խաղում... Մի օր էլ սայթաքեցինք, գլորվեցինք ցած:

Բարձր էր տանիքն ընդհանուր Մենք դեռ գլորվում ենք...

Այո՛, հայրենիքն անկեղծորեն սիրող Ալեքի և Ալեքների կորուստով մենք կորցրեցինք մեր հայրենիքի մի մասը: Նաև այս գրքով, վստահ եմ, կկրթվի հայրենասեր նոր սերունդ, ի նպաստ հզոր Հայաստանի, հզոր Արցախի և հզոր սփյուռքի: Փառք մեր հերոսներին... փառք մեր հայրենիքին...

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԿՐԻՎԱՍ ԵՒ ՄՐՑԱԽՅԱՆ 44 - ՕՐՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՄՆԱՍՏՈՒՄ ԱԼԵԿՍԱՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

գործողություններին: Հավելեմ միայն՝ վաղը հաղթելու է նա, ով մինչ այդ վաղը իր հոգու մեջ կկրի հաղթանակը:

Մնացական ՍՈՒՐԱՂՅԱՆ

Ստեղծվել է մի գիրք, որը հայզինվորի մարտնչող ու աննկուն ոգին է բացահայտում կենդանի երկխոսություններում, նամակների պատահական հորդում, հորձանք են տալիս սերը, կարոտն ու քնքշությունը: Մոր սպասումների ելևէջներում շարունակվում է հավատի և հույսի ճանապարհը: Հայրենիքում բացվող յուրաքանչյուր օր իմաստավորվում է հիշողության լույսով, հայրենյաց պաշտպանների կյանքը շարունակվում է բանաստեղծությամբ, հոգեպարար տեսաֆիլմով և հիշատակի գրքով:

«Հիշողություն» բառը փոթորիկների դիմագիծն է բացում մերքնդները՝ զարկվելով ափերին ճակատագրի: Չհնվորը մի ոտքով հենվում է հողին, մյուսով՝ շեմին է առաքելության ու պատմության: «Ես կսիրեմ մեր պատերազմները», «Իմ կյանքը իմ պատերազմն է»: Վիլյամ Սարոյանի և Հայրենյաց զինվոր Ալեքսան Սիմոնյանի խոսքերի միջև կապ կա. այն արյան կանչն է, հողի հիշողությունն ու ոգու հարատև պայքարը:

«Իմ կյանքը իմ պատերազմն է» ֆիլմը հոգու գույներով հյուսված համանվագային ստեղծագործություն է, որը հեղինակել են տաղանդավոր արվեստագետները (սցենարը՝ Անդրանիկ Կարապետյանի, ռեժիսոր՝ Գառ-

նիկ Սարգսյան, օպերատոր՝ Հարություն Չաքմիշյան, դերասաններ՝ Հովհաննես Հովհաննիսյան, Տիգրան Գաբրյան):

Սա ստեղծագործական պայքար է՝ ազգային դիմագիծն ու ոգին պահպանելու համար: Այսպես մեր լինելության տառերն ենք գրում ոչ թե ավագին, այլ սրտերում սերունդների, մեր տեսակի հմայքն ու կերպն ենք փորագրում ժամանակի ճակատին և համառության քարերի վրա: Խոսքս ամփոփեմ մի քառատողով:

Այս դատարկը՝ անհայրենիք ու անհասցե անկյունաքար, և բառերը թոթափելով հագուստները տազնապանների ազատվում են անդեմ վարքի շրջագծից այս մոլագար...

Կյանքի օրհնանք, գորութուն՝ տուր զինվորածին արգանդներին:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ



ՄԱՅԱ ՇԵՐԵՄԵՏԵՎԱ

Ծնվել է Նովոսիբիրսկում, ավարտել է Ազգային պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, բանաստեղծական երկեր գրելի հեղինակ է, թարգմանություններ է կատարում անգլերենից, հայերենից, վրացերենից: Հոգևոր և նյութական մշակույթի միջազգային փառատոնի դասընկեր է, «Զլբված երկիր» պոեզիայի մրցույթի հաղթող: Տպագրվում է տարբեր ամսագրերում և պարբերականներում:

Յուրի Տատարենկոյի հարցին՝ «Պոեզիան այն է, ինչ կա՞ ներսում, թե՞ այն, ինչ գնացել է ժողովրդին», Մայա Շերեմետևան պատասխանել է.

-Պոեզիան, իհարկե, աշխարհը տեսնելու միջոց է, առանձնահատուկ օպտիկա: Բայց որտեղի՞ց են գալիս տողերը՝ դրսի՞ց, թե՞ ներքին կենտրոնացումից: Ինձ թվում է՝ եթե օպտիկան չկարգավորես, չես լսի, չես ընկալի: Երբեմն ասես ինչ-որ քամի է

զլխավերևում: Հենց դա զգաս, պետք է առավելագույն կենտրոնանալ, հարմարեցնել, այսպես ասած, կարգավորել այն հավաքները, օպտիկան: Հակառակ դեպքում կհեռանա կամ կխաթարվի: Բայց հորինել հաստատ պետք չէ: Պոեզիան ինչ-որ շատ կարևորի հետ միավորումն է, քո առավելագույն կենտրոնացումը: Այնուհետև կարելի է հղկել, ավելորդը հեռացնել, տողը փոխարինել: Բայց զլխավորը առաջնային ազդակի էներգիան պահպանելն է: Իսկ այն, ինչ կմնա կգնա ժողովրդին, անհայտ է: Խլեբնիկովը, Այգին, Սոսնորան դարձան ժողովրդի: Իսկ չէ՞ որ սա է իսկական պոեզիան:

Կանգնած ենք լռության գետի մեջ և ոչնչի միջով փորձում ենք փնտրել ու գտնել սկզբում՝ ծայրավորները, հետո՝ բաղաձայնները՝ ա-ա-ա օ-օ-օ ու-ու-ու մ-մ-մ

Բարև, աղավճի, ի՞նչ հուզիչ խանդաղատանք է թևի ներսում:

Բարև, աղավճի, ի՞նչ հուզիչ խանդաղատանք է թևի ներսում:

ա՛խ, միայն թե ոչ այս վարդը...

ա՛խ, եթե այդ վարդը չլիներ...

Գրի՛ր ինձ թեկուզ մի տառ քո այբուբենից, կխորհեմ դրա շուրջ, ինչպես չիմացի իմաստունը՝ գավի՛ն հակված...

Ասաց՝ դու նման ես պատանյակի. չգիտեմ՝ ինչից երջանկացա ես...

Դու խանդում ես ինձ գրքին. դեռ երեք էջ էլ կխաղամ հոգուդ հետ...

Քույրե՛ր, քույրե՛ր՝ ծիծեռնակներ, կարելի է ձեզ հետ ճախրել, երկատված երկինքը դեպի...

Գուշակում էի բառարանով. ընկավ՝ խանդել, կոտորել. մտածմունքի մեջ եմ...

Երկարուհու նման գրուցում եմ լուսանկարիդ հետ, նախատում եմ, լաց լինում, կանչում...

Եղևանին բուրում էր զլխապտույտ, ճողվում էր ոտքերի տակ Իսահակի,

Օղբ ծովի համ ուներ, Իսկ ամպը հենված էր սայրին:

Թխակապույտ աղավճին թռավ ինձ մոտ, Պարանոցը՝ բաց մանուշակագույն, Կիսադեմով դիպավ աչքերիս խորքին, Թխկթխկացրեց պատուհանի՝ մա-րի-ն-կա...

Հանկարծ շղարշը բացվեց, Նորացավ այս առավոտ աշխարհը, Ծերացավ իմ մեղքը. Դու այսօր երագիս չեկար...

Շրջանի ներսում

Մինչ դու քնած ես, ես նկարում եմ լուցկու տուփ, լուցկու տուփ և գավաթ, գավաթ և սեղան, սեղան և սենյակ, սենյակ շրջանի ներսում, քանի դեռ դու քնած ես

Ես նկարում եմ և դրանում արդեն Աստուծո մատն է խառը, և նրանում, թե ինչպես է լույսն ընկնում պահելով սահմանները արտացոլանքով և հակադրությամբ ստվերներին բախվելիս նվազեցնելով և առկայծելով

ստվերներում, ստվերներում նիրհող ափերիդ, սիրելիս, մեջող ափերիդ և փակ կոպերիդ, փակ կոպերիդ և թրթռացող արտևանքներիդ, արտևանքներիդ և փոքր-ինչ կիսաբաց շուրթերիդ, կիսաբաց

և բանն այն է, թե սիրտն ինչպես է սեղմվում քո ժպիտից, ինչպես աչքերը կկոցվեն, երբ դու քնած ես այդքան մոտ, այսքան մոտ, և թե ինչպես եմ փորձում գիրկս առնել այդ սահմանները, գծերը մեր ծնկների, արմուկների, քերծվածքների, քերծվածքները՝ քնած ողերի աղեղներով, որոնց գծերը, ձևերը անպայման կմիանան և պիրկ կծգեն աշխարհները մի կետում, բայց երբեք չեն հատվի, ինչ կերպ էլ նետես տուփը լուցկու ներսում և այն բանում, թե ինչպես ես հուճկո լայն բացում դեպի հետադարձ հեռանկարը, դեպի այն կետը քո մեջ մինչև կայծը, քանի դեռ քեզմով չի չխկացնի անհամալի վերջնակետը...

արթնացա. գնամ՝ թեյնիկը կրակին դնեմ:

Ռուսերենից թարգմանությունը՝ Սոնա ԱՆՏՈՆՅԱՆԻ



ԳՐՈՂ ՉԵՄ

Իմ ու գրականության արանքում միշտ ինչ-որ բան կա ընկած կողքի սենյակից լսվող երեխայի ձայն կամ ֆեսայթուքի սթորիներ, քոնենթներ, նկարներ, քաղաքական

ելույթներ, կամ ծուլություն, զուգարանը, ընկերներս: Անծանոթ համարից եկած զանգը, հետզանգը անծանոթ համարին: Պատահական սխալվելը զանգուղի ու իմ պատահական որոշումը ինչ-որ բան անել-չանելու:

Իմ ու գրականություն ստեղծելու միջև միշտ, գրեթե միշտ վերջին տարիներին հաստատ ինչ-որ բան կա. պատ, Փինք Ֆլոյդ, կոտրված պատ, Գերմանիա մեկնող ընկեր, գերմաներեն սովորող մարդ, կարևոր մարդ, ես, ակվարիումի ձայն, ձկան լուռ-

յուն, փորձեր, բեմադրություն, պիես, պիեսի հեղինակ, կերպար ստեղծել:

Ստեղծել իմ մեջ մեկին, ով ինձնից առաջ ոչ մեկի մեջ չի եղել, չի ապրել, չի ծնվել: Ծնել էր մեկին երկունքի ցավերով փորձերի ժամանակ կոֆե խմելուց հետո, պաշտելուց հետո, էժան երջիկ ու պանիր ուտելուց հետո: Քնելուց հետո, փորձերից հետո՝ քաջուն, բոլորից քաջուն, լողանալու ժամանակ ծնել, զուգարանում, քնելիս, քայլելիս, լռելիս աղմկոտ ակվարիումի մոտ:

Ներսուսի ծնել մեկին քո չարած, չկարողացած, ուզած, մտածած, մոռացած, լկտի, խուժան, անմարդկային, մարդկային, արևելյան, արևմտաեվրոպական, պահպանողական, ծայրահեղ զգացողություններից: Ամեն անգամ: Ամեն պիեսից հետո, առաջ, մյուսին էլի փորձ, գիրք, Զ.Միլեր, Էյր, Չեսսե, Մուզիլ... Հատկություն, Օտարություն, Կերպարանափոխություն, Դուրբլին, Մուսկվա-Պետտուչի... Մարգարիտա, Աննա, Ապուլ Աննա, Պատերազմի ու խաղաղության Աննա, անկողնուս Աննա, հուշերիս Աննա, ֆրանսիացի Աննա կամ Բովարի: Կամ Էմիլիա, արհամարհող, չար, զգվելի, կրքոտ, խեղճ, անզուսպ, միայնակ, մերկ: Մերկությունը քաթցնելու չափ բան կա իմ ու գրականություն ստեղծելու միջև:

Հուշերի մեջ միշտ ինչ-որ անհանգիստ շարժում կա, տագնապ, հոտ: Ու միշտ դուռ կա, որը կբացես ու կմտնես ներս՝ հյուրանոցի համար, մեկի տունը, քո

տունը, ձեր տունը: Միշտ դուռ կա, որը կամ թակել ես, կամ չես էլ հասել էր դռանը, կամ հասել թակել փախել ես հեռու, ահավոր հեռու: Փոխել ես անունդ, դեմքդ, շորերդ, մտքերդ, ընկերներդ, սիրածներդ, հեռախոսիդ համարը: Փախել ես: Փախնելու մեջ միշտ ինչ-որ զգվելի բան կա: Ներսը քայքայող, սիրտդ ճզմող, մատդ դռան տակ թողնող: Ու միշտ մատ կա, որ մնում է դռան արանքը: Քեզ կյանքից գողացող զագելի դռան: Պոստեր տանող կամազի դռան: Կյանքդ խլած զենքի, զինապահեստի դռան: Դռան արանքում մնացած մարմիններ կան, որոնք չէին հասցնում ներս մտնել:

Մարմնիս մատների հետքեր կան, հետքեր կան նստարանին անծանոթ քաղաքի գիշերը, խմած հետքեր, ծնկի, քո (ո՞վ էիր դու): Ափիս մեջ դռան հետքեր կան, բացելու հետքեր: Բացելուց հետո ափսոսալու հետքեր: Ծնողից ծեծված հետքեր, տնից փախնելու հետքեր: Անառակ որդու հետքեր: Հավատացյալի հետքեր: Աղամից հետքեր: Եվային ձեռ քցած հետքեր: Քանդած-հավաքած հետքեր: Գրած ճժժած: Ծովի ափին ոտքի հետքեր. էս տեսարանը միլիոներորդ անգամ գրած, նոր բան չստեղծող, կրկնածո կրկնող, ապրածը հաղթած-պարտված, ֆենտիմենալը, հանճարեղ անենավատը վերապրող, վերապրածի անիմաստությունը զգացող, հիասթափված հետքեր:

Ամեն ինչ կրկնվում է այլ մարմնի ու մաշկի մեջ: Ամեն ինչ այլևս արված է, մնացել են փշրանքներ

ը, որ միայն գտնել է պետք: Քեզ զգում ես շրջանակում հայտնված մկան պես, որ վազում, արագացնում է ընթացքը, հոգնում, դիմացի թաթերը կորցնում են ուժը և տապալում նրան... Ամեն ինչ սկսվում է նորից: Այլ մարմնի մեջ, այլ ժամանակային գոտում, այլ ծնողների կողքին... ուր ինչ-որ մեկն անընդհատ կրկնի, որ մենք հիվանդ ենք ծնողներով: Նրանք վերջնականապես վարակել են մեզ: Բռնել ու բաց չեն թողել: Մեղքի տակ գցել ու պահանջում են անմեղ երևալ, ապրել: Սիրել նրանց: Հիվանդ սիրով: Անբեկաելի սիրով: Մինչև մահը կբաժանի մեզ՝ սիրո՞վ: Մինչև կվերջանան նրանց բոլոր պահանջները մեզ-նից:

Կամակորությունները, եզոն բավարարելու ձգտումը... Եվ գալու է զգացումը, որ միշտ եղել ենք աշխարհի երեսին: Միշտ էլ թափառել ենք տարբեր մասնիկների տեսքով, և միայն հիմա է, որ զգում ենք, զգում են, որ եղած են, կատարված: Որ ինչքան ժամանակ առաջ է գնում, էրքան փոքրանում ես դու, հաջորդ սերունդները, նրանցից հետո ծնվողները: Հասկանում ես՝ քեզնից առաջ սիրել են, գտել բառը, որով կսիրեին հեռավորության վրա: Գտել մայր-ցամաք, օրենքներ, իմաստ, միջուկային ռուսեր, հարմար զուգարանակոնք, անհարմար դասաժամեր, գրքեր, գրողներ, թատրոն... Հասկանում ես, որ գտնված է ամեն նորմալ բան: Ու կյանքի ընթացքը մեծից փոքր ձգվող թվերի հաջորդականություն է: Ինչքան առաջ է երբևէ կարևոր բաներ

գտնելը անհնարին է դառնում: Ինչքան չկան դրանք, էրքան մեծ է մախկիները ոչնչացնելու, քայքայելու, ծեծ-ծմռելու, ջարդուփշուր անելու ցանկությունը: Քեզ որպես մարդ պատռելու, որ չլինես նույնը, ինչ եղել են քեզ-նից առաջ, որ դու ուղղակի փակ շրջանի մեջ պտտվող հեթոթական սպառող չես, ուն թվում է, որ ստեղծող է...

Իջնում են գետնանցում, ինչպես Նոյը՝ տապանից, Մովսեսը՝ պատվիրանները ձեռքին, Հիսուսը երկնքից, Դանթեն դժոխք, հանքափորը հանք, գետը հյուսիսից հարավ, Արմսթրոնգը Լուսնին, ռուսը Հիդրոսիմայի ու Նազաասզիին: Իջնում են ու մտածում ինչքան եղած բան է իջնելն առհասարակ: Ինչքան եղած բան է ապրելը: Ու իմ ապրելը մնան է անկարող գրողի, որ գրագործություն է անում՝ չկարողանալով ստեղծել իրենը:

Ինձնից առաջ բոլորն են գրել, կարդացել, փայլատակել (Կուբրիկը՝ Սթիվենից լավ), թռչել, ընկել, աստղերով հիացել, ծովափով քայլել, կինո նկարել, կերպարներ ստեղծել, երեխա...

Ես հիմա անում եմ նույնը, ու քանի գնում դառնում եմ նույնը: Հանգում ենք չժայթքած, ժայթքելուն անկարող, անընդերք: Մնում է կապկելը, նորը երևալու, ստեղծելու այլանդակ ձգտումը: Այլասերվելու գայթակղությունը, որով հնարավոր է՝ կգտնենք աշխարհում դեռևս անհայտ փոշեհատիկներ:

Արմեն ԱՐՇԱԼՈՒՅԱՆ



Մարգարիտ ԴԵՐԱՆՑ

ՄԻԱՅՆԱԿ ԿԻՆԸ

Կնոջ՝ Էլենի հոգեհանգստյան օրը միտքը Լուկ Գրինն իրեն անտվոր թեթե էր զգում, թեև պահին հարիր լուրջ դեմքով էր ընդունում ցավակցությունները: Հավաքվել էին հիսունի մոտ մարդիկ, որոնք ավելի քան ութ տարի սպասում էին քմահաճ, ծանր բնավորությամբ, բարկության պոռթկումներով հիվանդ կնոջ մահվանը եւ առավել քան գնահատում էին միտքը Գրինի երկարամյա հոգածությունը անդամալուծի հանդեպ:

Արմիկն առաջին անգամ էր իր բոսի տանը: Կինը դժգոհ նայեց հնաճ, մաշված վարագույրին, մտածելով, թե ինչպես կարելի է տարիներով նման անհրապույր լաթերով մթնցնել հյուրասենյակը:

Հոկտեմբերյան հիվանդ արելի լուսից հյուրերի բերած ծաղիկները միագույն էին երևում:

«Վարագույրներն իրոք ավելորդ են, որովհետև ապակիներից այն կողմ խնամված պարտեզը հյուրասենյակն ավելի ընդարձակ, ամբողջական կդարձնի», - մտածում էր Արմիկը: Կինը ոչ միայն պլանավորում էր Լուկի աշխատանքային օրը, խմբավորում

բում եկամուտները, աչալուրջ հետեւում մյուս աշխատողներին, այլևս կիսում էր նրա կենցաղային հոգսերը, գնումներ կատարում, հագուստները տանում քիմ-մաքրման եւ այլն: Պատահում էր՝ աշխատանքից դուրս, երեկոյան ժամերին զանգում էին միմյանց, առիթը՝ աշխատանքային էր, բացի գործերից, Լուկը սովորաբար բողբոջում էր նրան, թե ինչ անտանելի է իր կյանքը անդամալուծ կնոջ հետ: Արմիկը երկարորեն սփոփում էր նրան, եւ առավելույան բուսին հայտնաբերում գրասենյակում ուրախ ու կենսունակ: Արմիկի կողքին նստած էր միտքը Թոմասենը, որը գրասենյակի ամենահին հաճախորդներից էր՝ առույգ մի ծերուկ իր հետաքրքիր իրականացումը՝ Էսթերի հետ, որը նրա երրորդ «երջանիկ անուսնություն» էր: Նրա նախորդ կամայք գուցե երկնքից հանդիմանում էին նրան, բայց դա բնավ էլ չէր մթազանում Թոմասենի կենսունակ ուրախությունը:

-Արմիկ, սիրելիս, շնորհակալ եմ: Չնայած այս իրավիճակում այդ մասին չեն խոսում, բայց սնունդը, խմորեղենը՝ ամեն ինչ համով էր, սպասարկումը՝ ճաշակով: Գիտե՞մ, Լուկն ամեն ինչ արել է քո խորհրդով, նաեւ քո շնորհիվ է նրա գրասենյակն այդպես հաջողակ, - այնուհետև վերցնելով բաժակը՝ հրաժեշտ տալու միտքը Լուկին:

-Մենք բոլորս այստեղ ենք, որովհետև սիրում ենք քեզ, Լուկ, ու կիսում քո վիշտը: Մենք գիտենք, թե ինչքան ծանր է եղել վերջին տարիներին քո կյանքը, չնայած դրան միշտ տեսել ենք քո փայլուն աշխատանքը: Իսկ հիմա թույլ տուր, որ ես ու իմ գեղեցկուհին լքենք ձեզ, - սասց նա՝ ամուր գրկելով կնոջ՝ Էսթերի մեջքը:

«Այս երկու թմբկիկները նույնպես իրավունք ունեն երջանիկ լի-

նելու», - հրաժեշտից առաջ գրկելով Արմիկին՝ մտածեց նա: Չեքքի շարժումով ընդգրկելով տունը, խորամանկ կկոցելով աչքերը, ուրախ, որ առիթ ունեցավ ասելու:

- Տունը նոր տանտիկնոջ կարիք ունի: Արմիկ, սիրելիս, մտածիր այդ միջոցառումը:

Կինը շառագունեց: Նայելով իր գործնական, անհրապույր հագուստներին, իրեն ոչ հատուկ սեւեռուն հայացքով զննեց Էսթերի նրբագեղ շրջագետն ու կռիկները:

-Ես էլ կին եմ, նա էլ: Երեկոյան համացանցում հայտնաբերեց աղջկա նամակը լուսանկարով՝ boyfriend-ին ինքնամոռաց փարված: «Jams ուղղակի ապշած է, որ այսքան տարի դու մենակ ես եղել, քո կյանքում տղամարդ չի եղել: Նա անընդհատ ճշտում է դա: Մտածիր քո մասին, դու չպետք է մենակ լինես: Սիրում եմ քեզ»: Եղանակը կտրուկ փոխվեց՝ ցրտեց: Դրսում մշուշ էր ու տարվա առաջին ծյունախառն անձրևը: Կինը բարձրացավ ննջասենյակ, եւ սառը սավանները գրկեցին նրա լեցուն մարմինը: Հիշեց միտքը Թոմասենի ասածը, աղջկա նամակը թախիծը պատեց նրա ամբողջ էությունը, եւ առաջին անգամ երկարատեւ ընդհատումից հետո մտածեց անուսնության մասին: Իր անուսնությունը հեռավոր, փոշոտ ասիական քաղաքում, որտեղ երբեք ձյուն չէր գալիս, այնքան արագ էր, իսկ ինքն՝ անփորձ: Արմիկը դեռևս լավ չէր ճանաչում իր անուսնուն, չգիտեր նրա մտքերը, զգացումները, կտրուկ փոխվող տրամադրության պատճառները եւ նրա մասին դատում էր՝ ելնելով արտաքինից, որ բարետես էր ու առնական: Մեկ տարի հետո նա լքեց իրեն եւ նորածին աղջկան: Դա շատ վաղուց էր: Այդ օրվանից հետո ոչինչ չլսեց նրա մասին: ...Եվ մի օր ինք-

նաթիռը իրենց բերեց այս երկիր: Աղջկա կրթությունը, իր փոքրիկ տունը երկար տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք էին: Պարտականությունների անվերջ շարան, իսկ ինքը կինն է, եւ միայն այսօր հայտնաբերեց, թե ինչքան կարիք ունի գոնե մեկ անգամ կյանքում սիրելու եւ սիրված լինելու: Բուռն ցանկությունը, որ նրանում էր սրտի ամենաբաբուն անկյունում, արթնացավ այդ երեկո՝ իր սրսփուն մտասեւեռմամբ իշխելու մյուս մտքերի եւ ցանկությունների վրա: Հաջորդ օրը Լուկը, տեսնելով նրան զուգված, կատակով հեզնեց:

- Մինչեւ Կրիստմաս երկու ամիս դեռ կա, իսկ դու արդեն տոնածառի պես զարդարվել ես:

Այդ օրվանից Լուկը սկսեց կատակներ անել Արմիկի արդու-զարդի, չխկնկան ապարանջանների, փայլուն ուլունքների մասին, որը զվարճացնում էր նրան: Իսկ Արմիկն ուրախ քրքջում էր նրա կատակներից, հաճախ ինքն իրեն ժպտուն, հանդգված, որ նա կիսում է իր զգացումները, եւ սպասվելիք երջանկությունը մոտ է: Գրասենյակում ուրախ մթնոլորտ էր տիրում, թուլացել էր լարվածությունը, որովհետև Արմիկն առաջվա պես խիստ չէր վերահսկում աշխատողներին: Նա կորցրել էր ախորժակը, բայց դրանից ավելի անհոգ էր դարձել ու կարծես սավառնում էր եթերում: Աշխատողները հեզնական ժպտում էին:

- Ի՞նչ է պատահել մեր «հաստ-լիկին»: Նա օր օրի նիհարում եւ գեղեցկանում էր այնպես, ինչպես միայն Սեթը կարող է գեղեցկացնել կնոջը:

Եկավ ծնեռը: Ռեստորանում Կրիստմաս-ին նվիրված երեկույթին Լուկը սովորականի պես առաջինը պարի հրավիրեց իր աջ ձեռքին՝ Արմիկին: Կինը երջան-

կության զագաթնակետին ինքնամոռաց պարում էր: Տղամարդը նայելով կնոջ կիսաբաց, նվաղուն աչքերին, զգեստի լանջաբացից տարուբերվող սպիտակ, խոշոր կրծքերին՝ տհաճ լարվածություն զգաց:

-Ես հոգնեցի, դու այնքան արագ ես պտտվում, - եւ ամբողջ երեկոյի ժամանակ այլևս չմտածեցավ նրան:

Նոր տարվա սկզբին նա այլևս կատակներ չէր անում, կարծես թե խուսափում էր Արմիկից: Թեև նրանք ունեին աշխատանքային քննարկվող հարցեր, Լուկը կրճատում էր նրա հետ առանձնասենյակում մենակ մնալու հնարավորությունները: Գարնան սկզբին, աշխատանքային մի լարված օր, առանձնասենյակում, Լուկն անկեղծորեն գովեց Արմիկին ճշգրիտ ֆինանսական վերլուծություն համար: Նրանք մոտ էին կանգնած: Կինը հանկարծակի բռնեց ու սեղմեց տղամարդու ձեռքերը, ծիծաղեց ուրախությունից:

- Լուկ, Լուկ... Տղամարդը հավաքացավ, որ իրենից ինչ-որ բան են պահանջում, ճնշվեց կնոջ մոտիկությունից այնպես, կարծես բանտարկված էր վաճառական: Նրա վարդագույն, գիրուկ երեսը կարմրատակեց, ցուցամատը կտրուկ պարզելով դեպի դուռը՝ հագիվ արտաբերեց:

- Հեռացիր... Կինն ուները կախ, կարծես տասը տարով ծեղացած, ոտքերը քարշ տալով դուրս եկավ՝ առանձնասենյակից: Այդ օրվանից Արմիկը կարծես սիրո տենդի մեջ էր: Տան տանիքին աղմուկով հարվածող մայիսյան տեղատարափ անձրևից մերթ ընդ մերթ լսվում էր որոտի ճայթյունը, որն ավելի էր խորացնում երազային հակվածությունը, չէ՞ որ կինը գտնվում էր իրականությունից դուրս: Նա

կրթոս երագում էր, որ իր կողքին պառկած լինելու Լուկը, որ նա դառնար իր ամենահարազատը, որ սիրեր իրեն ինքնամոռաց... Կինը չէր կարողանում քնել ու մտքում խոսում էր Լուկի հետ. «Ա՛խ, Լուկ, Լուկ: Դու այնքան լավ ես, բարի, հմայիչ: Ես գիտեմ, դու պարզապես պատշաճության համար է, որ խուսափում ես ինձից: Ինչ-քան հավատարիմ ես դու, չէ՞ որ կնոջդ մահից չի անցել մեկ տարի: Գիտեմ, դու այնքան նվիրված ես լինելու ինձ»: Դրանում ամառվա տապն էր: Ցանկասեր հայացքով ինչ-որ մի տղամարդ շուռ եկավ ու հետաքրքրությամբ նայեց Արմիկի ետեւից՝ փոխված մազերի

գույնով նա վերածվել էր արեւաշող շիկահերի: Արմիկը դա չնկատեց, մտքով իր սիրո հետ էր: Այդ պահին Լուկը նույնպես մտածում էր նրա մասին, բայց լցված բարկությամբ: Երեք տարի ետ բանկային հաշիվների տակ դրված էին մի այլ կազմակերպության չեկերը: Իրական չեկերն այդպես էլ չգտնվեցին, կարծես գետնի տակ էին անցել: Հաճախորդը հնարավոր է տասնյակ հազարներով տուգանք մուծի: Նա մնայլ էր, հիասթափված. - Արմիկն անճանաչելիորեն փոխվել է, կարծես թե նրան շուռ են տվել, ցրված է, լավ չի վերահսկում գրասենյակը, իսկ այսօրվա սխալն անձերելի է:

Մեկ տարին արագ անցավ: Աշնանային միապաղաղ անձրևը բեկվում էր Լուկի առանձնասենյակի լուսամուտին ու միապաղաղ գլորվում ցած: Նա ծայր սատիճան բարկության մեջ բղավում էր, նյարդային շարժումով մատնացույց անելով մերթ Արմիկի փայլուն ուլունքները, մերթ ապարանջանները. - Ես պատրաստ եմ տանել քո խայտաբղետ հիմարություններն ու ամենքեք չխկնջխկոցը, բայց ես թույլ չեմ տա ցեխտել իմ բարի համբավը, որը ստեղծել եմ արյուն-քրտինքով: Դու ազատված ես, չեմ ուզում որեւէ բացատրություն լսել:

Հաճախորդներից մեկը վաճառում էր իր բիզնեսներից մեկը: Լուկը շահեկան հաշվեկշիռ էր կազմել գնորդին ներկայացնելու համար: Արմիկը գնորդին դրանք հեռագրելու փոխարեն, սխալմամբ ուղարկել էր բիզնեսի իրական, ոչ այնքան շահեկան վիճակն արտահայտող հաշվեկշիռը եւ տապալել շահավետ գործարքը: Ամեն երեկո, աշխատանքից տուն վերադառնալիս, Լուկն ավտոմեքենայի մեջ հիշում էր Արմիկին, որոշում ընդունում զանգել նրան, ետ հրավիրել աշխատանքի: Ուտելուց հետո միացնում էր հեռուստացույցը,

ննջում բազմոցին եւ մոռանում աշխարհում ամեն ինչի մասին: Մի քանի ամիս հետո, նա ընտելացավ իր նոր գործավարին եւ մոռացավ նրան: Նոր տարվա մեջ Արմիկն աշխատանք գտավ մեկ այլ գրասենյակում, որտեղ նրան վճարում էին նույնչափ աշխատավարձ: Երեքամսյա առաջադից անգործության մեջ՝ անվերջ ուտելուց, նա արագ ու կազմակերպված վերականգնեց գիրուկ մարմինը: Արմիկն այլևս չուներ ոչ մի քաղցր ամուրք: Նախկին անվորդով, կյուրերես հաստիկն էր եւ ինքն իրեն չէր հետևում:

ՖՐԱՆՏԻՍԿՅԱՆ ՀԱՅԱՑՔ ԴԵՊԻ 13-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Գլխում Ռուբրուբացու մտաշխարհը և իր «Իտիներարում»-ի ծնունդը

Սուրբ Պողոսի և Պետրոսի տոնին՝ 1255 թվականի հունիսի 29-ին ֆրանցիսկյանների մի խումբ Նիկոսիայից հասնում է Անտիոք. խմբի մեջ էր նաև Գլխում Ռուբրուբացին (1220-1293թթ.), որ նոր էր վերադարձել մի երկար ճանապարհորդությունից: Ուղեգնացությունից հետո ստեղծվեց մի պատմություն, որն իր հետաքրքրության և առանձնահատկության շնորհիվ դասվեց այն բացառիկների շարքը, որ ոչ միայն միջնադարյան գրականության, այլև ամբողջ ճանապարհորդական գրականության ուշագրավ մնուշներից է:

Գուլիելմոյի աշխատության կարևորությունը միայն պատմելու և նկարագրելու մեջ չէ, այլ լինելով մի վկայություն առաջին դեմքից. ֆրանցիսկյան մի կիրթ և պատրաստված առաքելության գնացած եղբոր աչքերով XIII դարում, նաև մի կարևոր աղբյուր է ասիական ժողովուրդների ուսմանասիրության իրեն ժամանակակից, և իհարկե որպես աղբյուր հայկականի և հայերի վերաբերյալ:

Գուլիելմոյի «Հայաստանը» 1. ԱՊԱՅՈՎ ԱՆՎԱՅՆԱԳԻՍՏԸ ԿԻՒԿԻՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԱՅԻՍԻ 5-ԻՑ - ՀՈՒՆԻՍԻ 15-Ը 1255թ.).

Ասվում է, որ Գուլիելմոն Հայաստանով անցել է իր ճանապարհորդությունից վերադառնալիս, Կովկասից դեպի Կիլիկիա: Նա իր ժամանակի մարդն էր, և պետք չէ սպասել այն ճշգրտությունը, որ շատ ընդունելի պիտի լիներ ժամանակակից պատմաբանի համար, համենայն դեպս նույնիսկ այսպիսի գրվածքով բացառիկություն են շատ հետաքրքիր տեղեկություններ, և այս ամենը ցույց է տալիս Կոռնիկոս հասնելուց հետո պատմությունը վերլուծելիս՝ 1255 թվականի մայիսի 5-ին: Գուլիելմոն մնաց նավահանգստում մինչև մայիսի 17-ը, երբ իմանալով Չեթում 1-ի պատգամաբերների հասնելը Սիս, որոշեց անձնապես գնալ մայրաքաղաք, որտեղ նրան ընդունեցին Կոստանդին իշխանի

պալատում՝ որպես պատվավոր հյուր: Հունիսի կեսերին հասնում է Այաս, այնուհետև նավ նստելով գնում է Կիպրոս, որպեսզի միանա եղբայր թովմասին, չնայած երկար շրջանին, որ անցկացրեց Չեթումի թագավորությունում, Գուլիելմոն չգրեց և չնկարագրեց ոչ Սիսը և ոչ էլ այն նավահանգիստները, որտեղ եղավ, և այս ամենի բացատրությունն այն է, որ թագավոր Լուիջին արդեն բավականին լավ ճանաչում էր Կիլիկյան թագավորությունը, և անպատեհ կլիներ մի բան գրել, որը արդեն հայտնի էր թագավորին, բացի այդ նաև երկու արքունիքներն էլ սովորաբար դեսպանություններ ունեին, իսկ եղբոր և թագավորի փոխվարչությունը հայկական արքայական ընտանիքի հանդեպ վկայված է այն փաստով, որ Գուլիելմոն ճանաչում էր բոլորին նույնիսկ անուն առ անուն: Նրա ոգևորությունը նաև փաստում է իր երկար մնալու ցանկությունը Հայկական թագավորությունում, նույնիսկ հասնելով Կոռնիկոս, եղբայրը կարող էր երեք օրվա նավարկությունով հասնել իր վանքը, բայց և այնպես չի մեկնում:

2. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿԻՐԸ ՄԵԾ ՀԱՅՔԸ (1254թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՎԵՐՋ - 1255թ. ՓԵՏՐՎԱՐԻ ՎԵՐՋ). «Իտիներարիում»-ի պատմողական ռիթմը հիմնականում կենտրոնացած է վերադարձի ճանապարհորդությունը նկարագրելու վրա՝ հազվադեպ անդրադառնալով բնական աղետներին և կամ նշանավոր վայրեր այցելություններին, ինչպիսին է օրինակ Սեբաստիա քաղաքը, որը ֆրանցիսկյան եղբայրը նկարագրում է որպես Փոքր Հայքի մաս, ուր թաղված են Քառասուն մարտիրոսները, բայց նաև ափսոսում, որ գոյություն չունի Սուրբ Բարսեղի եկեղեցին: Ավելի կարևոր հատվածը վերաբերում է Մեծ Հայքին և Արարատի հովտին, որտեղ բարձրանում է Արաքսի հոսանքն ի վեր՝ սկսած 1254 թվականի նոյեմբերի 23-ից, այդ օրը Սուրբ Կղեմոսի տոնն էր, դժբախտաբար Գուլիելմոն չի նկարագրել ինչ է տեսել իր ճանապարհորդության ընթացքում մինչև Նախիջևան: Այնուամենայնիվ տեղեկությունները շատ կարևոր են, որքան էլ որ հակիրճ են: Այս ընթաց

քում Գուլիելմոն իջևանում է Նախիջևանում 1254թ. դեկտեմբերի 25-ից մինչև 1255թ. հունվարի 13-ը, ապա չորսօրյա քայլերից հետո հասնում է Շահնշահի (Sahensa, 1207-1262թթ.) իշխանություն, որտեղ էլ հյուրընկալվում է հունվարի 16-ից 31-ը, մի վայրում, որ այդպես էլ անբացահայտ է մնում: Եվս չորս օր ճանապարհորդելուց հետո հասնում է Անի, և այստեղից քառասունորդացի առաջին կիրակին հասնում է Ալաշկերտ), որը Գուլիելմոն նկարագրում է որպես մի քաղաք՝ բնակեցված հայերով և հույներով, բայց քաղաքակազմային մուսուլմանների կողմից կառավարվող: Եղբոր քարավանը եղավ նաև Երզրումում՝ փետրվարի 21-ին, որտեղից Եփրատի հունով գնաց դեպի Երզնկայի մոտակայքերը, ապա փետրվարի 28-ին հասավ Փոքր Հայքի Կամախ քաղաքը: Կներկայացնում երեք տիպիկ դեպքեր՝ վկայելու համար «Իտիներարիում»-ի կարևորությունը որպես մշակութային և արվեստական հատկանիշների աղբյուր:

Առաջին դեպքը վերաբերում է Նախիջևանի նկարագրությանը, որը Գուլիելմոյի համար Արարատի քաղաքն է, որի մասին եղբայրը գրում է. «Մի ժամանակ շատ գեղեցիկ և մեծ քաղաք էր, մի մեծ թագավորության մայրաքաղաք, բայց այսօր թաթարները այն վերածել են մի իրական անապատի: Մի ժամանակ այստեղ կային հայկական 800 եկեղեցիներ, բայց բարբարոսները դրանք ավերեցին, և մնացել է միայն երկու փոքրիկ եկեղեցի: Եկեղեցիներից մեկի մեջ նշեցի Սուրբ Ծնունդը մի եկեղեցականի հետ, հնարավորությամբ սահմաններում»: Հաջորդ օրը այդ եկեղեցու վարդապետը մահանում է, և հոգեհանգստյան կարգի համար մի եպիսկոպոս է ժամանում իր տասնմեկ վանականների հետ: Նրանք շատ բարի էին ու ընկերակցում են Գուլիելմոյին՝ պատմելով հետաքրքիր դրվագներ այս տարածքի պատմություններից, սրբատեղիներից, սուրբ վայրերից, մարգարեներից և լեգենդներից: Այս պատմություններից շատ տպավորիչ էր Գուլիելմոյի համար այն վանականի պատմությունը, որը ցանկացել էր բարձրանալ Արարատ լեռը և Նոյյան տապանից մի կտոր գտնել, որի ընթացքում Տիրոջ հրեշտակը, երազի մեջ գալով, տվել է տապանից մի կտոր, և տապանի այդ կտորը

պահվում է հենց այն եկեղեցում, որտեղից որ գալիս էր եպիսկոպոսը: Չնայած այն փաստին, որ Գուլիելմոն չի նշել վանքի անունը, բայց շատ հավանական է, որ դա Հայրավանքն էր, այս մասունքը Գեղարդի հետ մեկտեղ, ըստ Վարդան Արևելցու, պահվում է հենց Հայրավանքում, նույնակազմացություն բայց և այնպես հստակ չէ, քանի որ ըստ որոշ աղբյուրների, միայն այս վանքը չէր, ուր պահվել է սուրբ մասունքը: Երկրորդ դեպքը վերաբերում է Անիին՝ նկարագրված նաև մի այլ ֆրանցիսկյան միսիոներականի կողմից 13-րդ դարում: Չաքարյան մայրաքաղաքը կարելի էր բնորոշել տեղանքի ամրությամբ և հազար ու մի եկեղեցիներով շրջապատված, կային նաև երկու մզկիթներ:

Երրորդ դեպքն առնչվում է Նախիջևանից դեպի Անի գնացող ճանապարհի ընթացքին, ուր միսիոներականը հյուրընկալվեց հայ-վրաց մի պարոնի՝ Շահնշահ անունով: Հաշվարկները մոտավորապես ցույց են տալիս, որ հանդիպումը եղել է Դվինի մերձակայքում: Բայց և այնպես չի հստակեցվում նաև այս դեպքը, քանի որ այս տարածքը ավերվեց մոնղոլների կողմից 1236 թվականին: Կարող է նաև լինել մի բնականվայր ոչ հեռու կործանված հին մայրաքաղաքից: Մնացածի մասով Գուլիելմոն լռում է, ինչպես օրինակ Անիի և Նախիջևանի պարագայում, այլ միայն «Գեղեցիկ գյուղեր, բնակեցված քրիստոնյաներով, որ ունեն նույնանման եկեղեցիներ, ինչպես նաև կաթողիկե եկեղեցիներ»՝ նկարագրելով համեմատում է, հավանաբար մտքում ունենալով ռոմանա-ֆրանսիական եկեղեցիները:

«Բոլոր հայերը իրենց տանը մի սուրբ անկյունում պահում են փայտյա մի խաչ և դիմացը միշտ վառում են մոմ, իսկ այն, ինչ մենք անում ենք օրինված ջրով, նրանք անում վառելով խունկը և ծխելով տան բոլոր անկյուններում, որպես չարից ազատում ու մաքրում:

Նշանակալիորեն ընդգծելի է, որ Գուլիելմոյի ուշադրությունը հայկական կենցաղի ու սովորությունների հանդեպ գերակշռում է իր «Իտիներարիում»-ի մեջ ու ոչ միայն հայկական պատմական սահմաններում, այլև հայաբնակ այլ վայրերում: 3. ՄԵՏԱՔՍԻ ԵՒՆԱՊԱՐՉԸ

(1253թ. ՕԳՈՍՏՈՍ - 1254թ. ՀՈՒՆԻՍ). Արդեն դեպի Մոնղոլիա ճանապարհորդության ընթացքում միսիոներականին վիճակվել է հանդիպել հայերի հետ, որոնք տեղափոխվել և կան գործի են դրվել մոնղոլական կառավարության կողմից, ինչպես օրինակ այն հավատացյալների համայնքը, որոնք հետ մեկտեղ Սուրբ Չատիկը Կարակորումում 1254 թվականին, և կան այն հայ վարդապետները, որոնք իր համար թարգմանում էին Լուիջի արքայի նամակը Սարատակին 1253թ. օգոստոս ամսին: Այս շրջանի հայերը լավ չվարվեցին եղբոր հետ՝ ստուգելով նամակաճան պարունակությունը, և այսպիսով հարուցեցին վրդովեցուցիչ տպավորություն, որը տարբերվեց Կիլիկիայի հայերի պահվածքից եղբոր հանդեպ:

...Չորսըսերը Նախիջևանի եպիսկոպոսի և հետո Սիսի արքունիքում գտնվելը ենթադրել են տալիս, որ ֆրանցիսկյան եղբայրը գոնե փոքր-ինչ ծանոթ էր հայոց լեզվին: Մի դրվագ կառաջարկեմ որպես օրինակ. Գուլիելմոն Նախիջևանում հիացած էր Արարատ լեռով և շատ ցանկանում բարձրանալ լեռը, այսպիսով փնտրում է տեղեկություններ տեղի բնակիչներից և եպիսկոպոսից, իսկ այս դեպքերի մասին էլ գրի է առնում մի ծեր մարդու խոսքերը, որ բավականին պոետիկ են.

«Լեռը, որ երևում է, այդքան դժվարին չէ բարձրանալը, բայց մի ծերուկ ինձ մի շատ հետաքրքիր պատմություն պատմեց, թե ինչու ոչ ոք չպետք է բարձրանա այդ լեռը: Իրենց լեզվով այս լեռը կոչվում է Մասիս, և ծերուկը ինձ ասաց, որ Մասիսի վրա ոչ ոք չպետք է բարձրանա, որովհետև երկրի մայրն է»:

Այստեղից շատ պարզ է, որ Գուլիելմոն կարողացել է ուղղակիորեն շփվել տեղի բնակիչների հետ, եթե նույնիսկ հայերենի տիրապետումը եղել է շատ քիչ, իսկ այս ամենը անհավանական չէ, քանի որ նա ժամանակին եղել է Սուրբ Հողուն մի վանական, և այնտեղ քարոզ է տվել նաև արևելքից եկած ամենամեծ հիացմունքը դեպի հայ ժողովուրդը. այս ամենն է, որ կարող ենք տեսնել:

Ալեասիա ԲՈՒՔԻՍ Ուղիների համալսարան, գիտությունների թեկնածու

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունը իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543	տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան	Համակարգչային ձևավորումը՝ «Էլտրորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ
---	--	--